«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ի՞նչը կարող է լինել Բուլինգի առաջացման պատճառ և ինչպե՞ս կանխարգելել Բուլինգը

Հետազոտող ուսուցիչ՝ Ռիտա Գալստյան

(Մեղրաձորի միջնակարգ դպրոց)

Հրազդան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
ԳԼՈՒԽ 1. ԲՈՒԼԻՆԳ 5
1.1 Բուլինգ հասկացության էությունը 5
1.2 Բուլինգի առաջացման պատմությունը 5
1.3 Բուլինգի տեսակները 7
1.4 Բոլինգը և դրա դրսևորումները դպրոցում 8
1.5 Բուլինգի կանխարգելման և արձագանքի սխալ եղանակները 9
Գլուխ 2. Գործնական մաս 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 22

Ներածություն

Ես դասավանդում եմ դպրոցում աշխարագրություն և բնագիտության առակաները արդեն 27 տարի: Այդ տարիների ընթացքում դասավանդել եմ բազմաթիվ աշակերտների, ունեցել բազմաթիվ լավ սովորող աշակերտներ և օլիմպիականներ: Լավ սովորողների և օլիմպիականների մեջ գերակշռում էին տղաները, ովքեր սովորում էին սիրով և մեծ պատասխանատվությամբ: Սովորողները հեղինակություն էին դասարանում, սակայն վերջին տարիներին նկատվում է մի երևույթ, որը մինչև այդ նկատելի չէր: Փոխվել է սովորողների տեղն ու դերը, կարծես դասարանում ծաղրի ենթարկեին սովորողներին՝ հասկապես տղաներին, սովորաբար դա արվում էր աննկատ , բայց որպես ուսուցիչ նկատում էի դա: Այս երևույթը խիստ ահանգսացնում էր ինձ, քանի որ եթե կա նման երևույթ, ապա ի՞նչ դասավանդման որակի և արդյունավետության մասին է խոսքը: Ավելին կարծես գնալով խորանում է այդ երևույթը և ձնագնդի պես ավելի է մեծանում և խոչընդոտում դասավանդման արդյունավետության բարձրացմանը: Եթե նախկինում ծաղրում էին վատ սովորելու, վատ տեսնելու, վատ հագնվելու, վատ ապրելու համար, ապա այժմ ծաղրում են նաև բարձր առաջադիմության համար : Ի՞նչ անել: Ո՞րն է պատճառը: Ինչպե՞ս կանխարգելել:

Հետագայում մասնակցելով վերապատրաստումների հասկացա, որ այդ երևույթը, որին ես և բազմաթիվ ուսուցիչներ նկատել էին, գիտական գրականության մեջ կոչվում է <<Բուլինգ>>: Հասկացա,որ բուլինգը ամենուր է՝ դպրոցներում, համալսարաններում, բանակում, աշխատավայրերում և այլուր: Այս խնդիրը կարևոր էր ինձ համար և ցանկացա բարձրաձայնել, քանի որ հատկապես դպրոցներում հանդիպող բուլինգը համաշխարհային խնդիր է, որն ունենում է բացասական հետևանքներ դպրոցական միջավայրում և կարող է խախտել օրենքը ըստ որի յուրաքանչյուր երեխա ունի ապահով կրթություն ստանալու իրավունք:

Եթե մոտ կես դար առաջ հոգեբաններն ու սոցիոլոգները նշում էին երեխաների և դեռահասների ագրեսիվության առանձին դեպքեր, ապա մեր հասարակության կառուցվածքի և սոցիալ-իրավական բաղադրիչի փոփոխությամբ բուլինգի երևույթը սկսեց դրսևորվել ամենուր և զանգվածաբար:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական և հետազոտական մասերից: Աշխատանքում մանրամասն ներկայացրել եմ բուլինգ երևութը, ուսումնասիրել եմ

աշխակերտների շրջանում: Աշխատանքում ներկայացրել եմ բուլինգի կանխանգելմանը նպաստող մի շարք առաջարկներ:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել բուլինգի կանխարգելման արդյունավետ կազմակերպման մեխանիզմները դպրոցում:

Վարկած-Ցածր ինքնագնահատականը կարող է պատճառ հանդիսանալ <<Բուլինգի>> զոհ դառնալուն:

Խնդիրները և մեթոդաբանությունը

1. Բացահայտել <<Բուլինգ>> հասկացության էությունը
2. Ուսումնասիրել բուլինգի առաջացման պատմությունը
3. Նկարագրել բուլինգի տեսակները
4. Ներկայացնել բուլինգի արդիականությունը
5. Բացահայտել բուլինգի կանխարգելման մեխանիզմները

Ուսումնասիրության մեթոդաբանությունը ներառում է նյութի տեսական մասի ուսումնասիրություն (ինֆորմացիա փնտրելու մեթոդ), առկա գրականության ուսումնասիրության մեթոդ, հարցման մեթոդ և զրույցի մեթոդ:

ԳԼՈՒԽ 1. ԲՈՒԼԻՆԳ

<< Ամեն անգամ, երբ որևէ մեկի հետ հակամարտության մեջ ես, կա մի գործոն, որը կարող է փոփոխություն բերել. դա կամ վնասելու է ձեր հարաբերությունները, կամ խորացնելու է դրանք: Այդ գործոնը վերաբերմունքն է>>

Ուիլյամ Ջեյմս

1.1 Բուլինգ հասկացության էությունը

Շատերին անծանոթ այս տերմինն գուցե առաջին հայացքից օտար մի բառ թվա, բայց երևույթը ծանոթ է բոլորիս: Բուլինգը (անգլ. bully՝ կռվարար, բռնարար) անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդում, հոգեբանական տեռոր, ծեծ, հեգնանք, ծաղրանք, բամբասանքների տարածում: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած կոլեկտիվում, բայց առավել վտանգավոր է դպրոցականներում ու ուսանողության շրջանում: Բուլինգն իրականացնում են անձինք, ովքեր գերակա դիրք ունեն իրենց շրջապատում և այս ամբողջ գործընթացում նրանք միայնակ չեն, հաճախ շրջապատող մարդիկ, ովքեր ուղղակի լուռ հետևում են հանդես են գալիս վկաների դերում: Բուլինգը կարող է սթրես կամ վնաս պատճառել թիրախավորված անձին, ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, ինչպես նաև կրթական վնաս: Բուլինգի ենթարկվող անձը համարվում է *բուլինգի զոհ*, իսկ բուլինգի ենթարկող անձը *բուլեր*:

1.2 Բուլինգի առաջացման պատմությունը

<<Բուլինգ>> տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականին, նշանակել է <<սիրելի>>, ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականին:

Առաջինն այս խնդիրն ուսումնասիրել է սկանդինավցի պրոֆեսոր Դեն Օլվեուսը, որը 70-ական թվականներին հետազոտություններ անցկացրեց «Բուլինգ տղաների միջավայրում» անվանմամբ[1]: Այդ հետազոտություններից հետո սկսվեց «բուլինգ» երևույթի ուսումնասիրությունը շատ երկրներում: Բազմաթիվ են բուլինգի մեկնաբանությունները:

Դ. Օլվեուսը բուլինգը հասկանում էր, որպես բռնության հատուկ տեսակ, երբ մեկ մարդ (կամ խումբ) ֆիզիկապես հարձակվում է մեկ այլ մարդու կամ խմբի վրա, իսկ վերջինս թույլ է և չի կարող ինքն իրեն ֆիզիկապես և հոգեպես պաշտպանել:

[1] https://scholarworks.waldenu.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=2605&context=dissertations

Ի. Ն. Կոնան մեկնաբանում է բուլինգն ինչպես վախեցնելու ցանկություն կամ ֆիզիկական ու նաև հուզական ահաբեկչություն՝զոհի մոտ վախ առաջացնելու և նրան ենթարկեցնելու նպատակով[2]:

Դ. Լեյնը բուլինգ երևույթը հասկանում էր որպես ֆիզիկական և հոգեբանական երկարատև բռնություն անձի կամ խմբի կողմից ուրիշ անձի հանդեպ, ով չունի ինքն իրեն պաշտպանելու հնարավորություն:

Ի. Բեռդիշևը բուլինգի ներքո հասկանում է գիտակցված, երկարատև բռնություն՝ ուղղված ինքնապաշտպանության նշաններից զուրկ որոշակի քանակի մարդկանց: Վերոնշյալ հեղինակները բուլինգը մեկնաբանում են ինչպես բռնություն:

Սակայն Բուլինգը ուղղակի բռնություն չէ: Բռնությունը իրենից ներկայացնում է դրա տեսակներից մեկը: Այդ իսկ պատճառով ներկայացվեց ավելի օպտիմալ տարբերակ Ս. Վ. Կրիվցովայի կողմից: Բուլինգ՝ նշանակում է որոշ երեխաների ագրեսիա մյուս երեխաների նկատմամբ, երբ կան անհավասար ուժեր՝ ագրեսոր և զոհ: Դիտարկելով տարբեր սահմանումներ տվյալ հասկացության մասին, կարելի է ասել, որ դրանք ունեն իրենց ուրույն տեղը, սակայն դրա հետ մեկտեղ հասկացության էությունը կարիք ունի բացահայտվելու և անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու բուլինգի տեսակները: Բուլինգի ենթարկվող անձը համարվում է բուլինգի զոհ, իսկ բուլինգի ենթարկող անձին համարում են բուլեր: Բուլինգը բաժանվում է մի քանի տարատեսակների՝ կիբերբուլինգ, որը իրականացվում է համակարգչի միջոցով, օգտագործելով համակարգիչը որպես վնասելու միջոց, ֆիզիկական բուլինգ՝ հարվածելու, ծեծի միջոցով, վերբալ կամ խոսքային բուլինգ՝ պիտակավորման, ծաղրական անունների միջոցով, և հարաբերական բուլինգ, որի միջոցով փորձում են մեկուսացնել մարդուն իր շրջապատից և կանխամտածվածորեն բացառում նրան հասարակությունից: Բուլինգի զոհ դառնալը շատ առումներով կապված է երեխաների դաստիարակությունից և ընտանեկան մթնոլորտից, որը նույնպես անդրադառնում է երեխայի ինքնագնահատակի ձևավորման վրա: Բուլինգն ամենուր է՝ տանը դպրոցում, աշխատավայրում, բակում և այլուր: Իսկ ո՞վ է դառնում բուլեր: Բուլեր դառնում են այն անձինք, ովքեր իսկապես կարիք են զգում ինքնահաստատման և երբեմն որևէ մեկին վնասելու ցանկությունը լինում է նախանձից: Փորձերը ցույց են տվել, որ բուլերները հիմնականում լինում են այնպիսի ընտանիքներից որտեղ գործածվում են ֆիզիկական պատիժներ և նրանց ծնողները իրենց երեխաներին դաստիարակում են, որ յուրաքանչյուր խնդիր կարելի է լուծել ուժի և բռնության միջով: Բուլինգի զոհ

[2] file:///C:/Users/User/Downloads/8075-%23%23default.genres.article%23%23-11664-1-10-20181008%20(1).pdf

դարձածները հիմնականում լինում են ոչ ապահովված ընտանիքներից, երբեմն նաև ծնողազուրկ, քանի որ նման մարդկանց վիրավորելը շատ ավելի դյուրին է: Բուլինգի զոհ դարձածները հիմնականում ներփակված են լինում իրենց մեջ, չեն կիսվում ոչ ոքի հետ և կարծում են, որ դա ամենաճիշտ լուծումն է: Բուլիինգի զոհ դարձածները ձեռք են բերում վախ դպրոցի հանդեպ, համարում են դպրոցը ոչ ապահով վայր: Դպրոցներում հանդիպող բուլինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության: Բուլինգը ըստ ձևերի կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը. հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլիինգի դեպքում բուլիինգի զոհին մեկուսացնում են իր միջավայրից՝ ընկերներից, կանխամտածված մեկուսացնելով նրան այդ միջավայրից: Ե՛վ անուղղակի և՛ ուղղակի բուլինգը հանգեցնում է նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածություն:

1.3 Բուլինգի տեսակները

Բուլինգը տեսակներն են.

1.Կիբեր բուլինգ. բռնության նոր ձևն է, որն իր մեջ է ներառում ագրեսիայի արտահայտումը օգտագործելով հաղորդակցման միջոցները (համակարգիչ, հեռախոս): Համացանցի, էլեկտրոնային հասցեի, սոցիալական կայքերի, չաթերի օգնությամբ հնարավոր է հետապնդել զոհին, նրա մասին անձնական տեղեկություն, բամբասանք և վիրավորանքներ տարածել: Կիբեռ-բուլինգի գլխավոր յուրահատկությունը անանուն մնալու հնարավորությունն է և դրանով իսկ կատարած քայլերի համար պատասխանատվություն չկրելը:

2.Ֆիզիկական բուլինգ. ներառում է հրել, թքել, հարվածել, ապտակել (ինչպես ձեռքով կամ ոտքով, այնպես էլ այլ որևէ առարկայով): Սեփականության վնասում կամ ոչնչացում, օրինակ՝ հագուստի, պայուսակի վրա գրառումներ անելը Գողություն Այլ մարդկանց կռվի կամ վիճաբանության մեջ ներգրավելը, որը ամենատարածվածն է ուսանողների շրջանում: Այն ներառում է բոլոր տեսակի ֆիզիկական ագրեսիաները, ինչպիսիք են հարվածելը, հրելը, որոնք կարող են իրականացվել մեկ կամ ավելի ագրեսորների կողմից:

3.Վերբալ կամ բառացի բուլինգ. պիտակավորման, ծաղրական անունների միջոցով:

4.Հասարակական բուլինգ. փորձում են մեկուսացնել մարդուն իր շրջապատից և կանխամտածված բացառում նրան հասարակությունից: Նրան հասցնում են սոցիալական կամ տնտեսական խտրականության, այլոց հետ անտարբեր վերաբերմունքի միջոցով:

5. Սեռական բուլինգ. դա սեռական նշանակության ոտնձգության կամ չարաշահման տեսակ է առավել լուրջ դեպքերում: Այս պարագայում սովորաբար հիմնականում զոհերեն ունենում աղջիկները:

1.4 Բուլինգը և դրա դրսևորումները դպրոցում

Բուլինգի զոհ դարձածները ձեռք են բերում վախ դպրոցի հանդեպ, համարում են դպրոցը ոչ ապահով վայր: Բուլինգը ըստ ձևերի կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի:

Ուղղակի բուլիինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը. հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլիինգի դեպքում բուլիինգի զոհին մեկուսացնում են իր միջավայրից՝ ընկերներից, կանխամտածված մեկուսացնելով նրան այդ միջավայրից: Եվ անուղղակի, և ուղղակի բուլիինգը հանգեցնում է նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածություն:

Բուլինգն ունի երեք հիմնական բաղադրիչ

1. ուժի առավելությունների օգտագործում
2. վնաս պատճառելը
3. կամքին հակառակ գործողություններ

Բուլինգի նպատակը թերարժեքության թաքցնելն է:

Բուլինգ իրականացնողը այն մարդն է,ով՝

- Չի սովորել պատասխանատվություն ստանձնել իր վարքի համար
- Ցանկանում է օդտվել մեծահասակների աշխարհի բարիքներից,բայց չի կարողանում ընդունել պատասխանատվություն սեփական վարքի նկատմամբ:
- Չի ցանկանում նկատել,թե ինչ ազդեցություն է թողնում իր վարքագիծը ուրիշների վրա:

Ըստ Stopbullying կայքի հետազոտությունների առանձնացվել են բուլինգի վերաբերյալ 9 հիմնական գաղափարներ.

1. Շատ սովորողներ ներգրավված են բուլլինգի մեջ:
2. Գոյություն ունեն բազմաթիվ նմանություններ և տարբերություններ բուլինգի ենթարկված տղաների և աղջիկների միջև:
3. Բուլինգի տեսակները սովորողների մոտ տարբերվում են ըստ տարիքի:
4. Գոյություն ունեն բուլինգի ռիսկի բազմաթիվ գործոններ, բայց նաև կանխարգելող գործոններ:
5. Չնայած այն հանգամանքին, որ բուլլինգի կարող է ենթարկվել ցանկացած սովորող, այնուամենայնիվ կան սովորողներ ովքեր գտնվում են ռիսկային գոտում:
6. Բուլինգը կարող է ազդել թիրախավորված սովորողների մտավոր, առողջական և ուսումնական կարողությունների վրա:
7. Բուլինգի ենթարկող սովորողները առավել հակված են հակասոցիալական վարքագծի քան այլ երեխաներ:
8. Բուլինգի ենթարկված սովորողների մեծամասնությունը չի պատմում մեծահասակներին:
9. Շատ սովորողներ ունեն մտահոգություն բուլինգի հետ կապված:

Բուլինգի զոհ հիմնականում դառնում են հասարակության մեջ իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձիք, կամ այն անձինք որոնք ունեն որոշակի արտաքին ֆիզիկական թերություններ՝ մեծ քիթ, տգեղ արտաքին, կաղ ոտք և այլն: Բուլինգի զոհ դառնալը շատ առումներով կապված է երեխաների դաստիարակությունից, ընտանեկան մթնոլորտից, որը նույնպես անդրադառնում է երեխայի ինքնագնահատականի վրա:

Դպրոցներում հանդիպող բուլինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության: Բուլինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ, կրթական հաստատություններ: Մեծ ակտիվություն են ցուցաբերում հատկապես Սկանդինավյան երկրները, Մեծ Բրիտանիան և Ճապոնիան:Այս հարցը արդիական է այնտեղ, որտեղ կա դպրոցական միջավայր կամ ընդհանրապես միջավայր:

1.5 Բուլինգի կանխարգելման և արձագանքի սխալ եղանակները

Բուլինգ երևույթը կարելի է հանդիպել բոլոր հասարակություններում և հասարակարգերում, մեր խնդիրը որպես մեծահասակ կայանում է նրանում, որ կարողանանք ճիշտ ուղղորդել երեխաներին: Այսպիսով, որպեսզի երեխաները դառնան ավագ սերնդի արժանի փոխարինողներ մեծահասակները պետք է հոգ տանեն նրանց

կենսական կարիքները բավարարելու համար, որն է չոտնահարեն նրանց իրավունքները:

Բուլինգի կանխարգելման գործընթացը բարդ և բազնաբնույթ է: Այն պահանջում է անհատական մոտեցում յուրաքանչյուր երեխայի համար: Եվ կանխարգելման նպատակով իրականացվող միջամտություն չենք կարող ցուցաբերել : Սակայն ներկայումս գոյություն ունեն կանխարգելման մի քանի սկզբունքներ, որ պետք է հաշվի առնել, որպեսզի չվնասենք կոնֆլիկտում մասնակցություն ունեցած կողմերին:

Սխալ եղանակներ.

0 հանդուրժողականություն բուլինգին. Այն կոչվում է <<Սովորողների հեռացման>> քաղաքականություն, այսինքն սովորողին հեռացնում են ուսումնական հաստատությունից տեղափոխելով մեկ այլ ուսումնական հաստատություն: Սա կարող է իր հերթին առաջ բերել շատ խնդիրներ, օրինակ խիստ պատժամիջոցները կարող են <<վանել>> սովորողներին բուլինգի մասին տեղեկացնելուց: Պետք է հիշել, որ բուլինգը կարող է լինել այլ խնդիրների վաղ ազդանշան: Բուլինգի ենթարկող սովորողները կարիք ունեն դրական, սոցիալական դերային մոդելի:

Կոնֆլիկտների լուծում և հասակակիցների միջնորդություն. Մեծահասակները հաճախ փորձում են խնդիրները հաղթահարել հասակակիցների միջոցով: Այն իր հերթին կարող է առաջ բերել մի շարք խնդիրներ. օրինակ քանի որ բուլինգը կոնֆլիկտի խորացման այն փուլն է, որտեղ միջնորդությունը ունի հակառակ ազդեցություն: Բուլինգի միջնորդությունը կարող է սխալ հասկացվել ներառված աշակերտների կողմից:

Խմբային թերապևտիկ աջակցություն. Սխալ է բուլինգի կանխարգելման նպատակով ցուցաբերել խմբային թերապևտիկ աջակցություն բուլինգի ենթարկող սովորողներին: Այն իր հերթին կարող է առաջ բերել շատ խնդիրներ: Օրինակ կարող է ներառել զայրույթի կառավարում, կարողությունների զարգացում, կարեկցանքի ձևավորում ինքնագնահատականի բարձրացում: Թեկուզ ունի լավ մտադրություն, սակայն հաճախ ստացվում է հակառակը, քանի որ խմբի անդամները միմյանց կարող են ծառայել որպես վատ վարքի մոդելներ և ամրապնդել միմյանց հակասոցիալական վարքագիծը:

Բուլինգի և ինքնասպանության միջև կապի չափազանցում կամ պարզեցում. Ըստ ԶԼՄ-ների սովորողների կողմից կատարված ինքնասպանությունների մասին հրապարակումների, որոնց ծաղրել են կամ բուլինգի են ենթարկել հասակակիցները, ստեղծվել է այն եզրակացությունը, որ բուլինգը ուղղակիորեն հանգեցնում է ինքնասպանության: Սակայն ըստ վիճակագրական տվյալների այս տեղեկությունը

այդքան էլ ճիշտ չէ: Չի կարելի կապ ստեղծել բուլինգի և ինքնասպանության միջև և այդ տեղեկությամբ կիսվել բուլինգի ենթարկված երեխայի հետ: Քանի որ այն կարող է <<ծրագրավորել> երեխայի գաղափարները և ուղղորդել այն դեպքում, երբ երեխան իր կարծիքով անելանելի վիճակում է:

Պարզ,կարճաժամկետ լուծումներ. Հաճախ պատասխանատուները ընտրում են խնդրի մասնակի լուծման մոտեցումները: Սկզբնական քայլերում այս ջանքերը հնարավոր է լավ են, սակայն մակերեսային լուծումները չեն կարող հաղթահարել խնդիրը:

Ճիշտ եղանակներ.

Կենտրոնանալ սոցիալական կլիմայի վրա. Դպրոցում իշխող սոցիալական կլիման հաճախ թելադրում է երեխաների վարքը: Փաստ է, որ բուլինգի ենթարկող երեխաների մեծամասնությունը անբարենպաստ ընտանեկան միջավայրում ապրող երեխաներն են: Ուստի բուլինգի կանխարգելման ճիշտ եղանակներից մեկը սոցիալական կլիման հարթեցնելու և բարենպաստ պայմաններ ստեղծելու մեջ է:

*Փնտրել աջակցություն բուլլինգի կանխարգելման համար.*Շատ կարևոր է դպրոցական և երիտասարդական ծրագրերի ղեկավարների կողմից իրականացվող վաղ աջակցությունը: Մեծահասակները պետք է պատրաստ լինեն պայքարելու բուլինգի դեմ որտեղ էլ, որ լինի:

*Համակարգել և ամբողջացնել կանխարգելման ջանքերը.*Բուլինգի կանխարգելումը պետք է համակարգված և ամբողջական լինի հարակից այլ ջանքերի հետ: Առաջարկվում է ուսումնական հաստատություններում ստեղծել համակարգող հանձնաժողով: Համակարգող խումբը կտեղեկացնի համակարգման, ամբողջացման կամ ռազմավարությունների ընդուման վերաբերյալ որոշումները: Բացի այդ դպրոցում գործող թիմերը պետք է ներկայացնեն իրենց անձնակազմը որտեղ պետք է ներառնվեն նաև ծնողները և աշակերտական խորհուրդը:

Կազմակերպել դասընթացներ բուլինգի կանխարգելման և ազդեցության վերաբերյալ. Մեծահասակները պետք հասկանան բուլինգի առանձնաատկությունները և դրա ազդեցությունը:

Ինչպե՞ս կանխարգելել այն. մեծահասակների վերահսկողության կարևորությունը գիտակցել, համապատասխանաբար արձագանքել եթե նկատվում է բուլինգը:

*Սահմանել բուլլինգը և մշակել կանոններ.*Որոշ երկրներում օրենքը ինքն է պահանջում, որ հանրակրթական դպրոցներում մշակվեն հակաբուլինգային ռազմավարություններ:

Դպրոցի անձնակազմը պետք է ստեղծի և պարզաբանի հստակ կանոններ բուլլինգի վարքի և ակնկալիքների վերաբերյալ, եթե դպրոցում նկատվում է բուլինգի երևույթը: Կիրառի համապատասխան մեթոդները այլ սովորողներին բուլինգից պաշտպանելու համար: Արձագանքել երբ նկատվում է բուլլինգ և լինել հետևողական: Կարել է.

1. Առանձնացնել ներգրավված երեխաներին
2. Վստահ լինել որ բոլոր երեխաները ապահով են
3. Լուծել սովորողների բժշկական կամ հոգեկան առողջության կարիքները:
4. Հանգիստ լինել ,հանգստացնել ներգրավված երեխաներին, ինչպես նաև ականատեսներին:
5. Միջամտության դեպում ցուցաբերել հարգալից վերաբերմունա:
6. Անհրաժեշտության դեպքում կարելի է ներգրավվել ծնողներին:

Գլուխ 2. Գործնական մաս

Ինձ համար շատ կարևոր էր իմանալ, թե ի՞նչ գիտեն բուլինգի մասին մեր դպրոցի սովորողները, ու՞մ են վստահում: Պարզելու համար կիրառեցի հարցաթերթիկային հարցման մեթոդը: Ստացվեց հետևյալ պատկերը: *Հարցաթերթ բուլինգի վերաբերյալ.*

1.Գիտե՞ք թե ինչ է բուլինգը* 1. Այո 2. Ոչ
2.Նշիր բուլինգի տեսակները,եթե գիտես* ----------
3. Ինչո՞ւ են հասակակիցները ձեզ բուլինգի ենթարկում. * 1. Ես չեմ ենթարկվել բուլինգի 2. Որովհետև ես ինձանից<< վեր>> եմ դասում 3. Քանի որ, ես ավելի շատ եմ դուր գալիս ուսուցիչներին 4. Քանի որ ես գեղեցիկ /յուրահատուկ եմ/ 5. Որովհետև ես շատ եմ կռվում համադասարանցիներիս հետ 6. Ես չեմ հասկանում պատճառը
4. Ինչպե՞ս եք դուք վարվում բուլինգի իրավիճակներում * 1. Ես բացակայում եմ դասերից,որպեսզի խուսափեմ դրանից 2. Ես ոչ ոքի հետ չեմ շփվում 3. Ես բացատրում եմ,որ այդպես վարվել չի կարելի 4. Ինձ այնպես եմ պահում,ասես ոչինչ չի եղել
5. Ենթարկվե՞լ եք երբևիցե բուլինգի* 1. Ոչ, երբեք 2. Այո, հաճախ
6.Բուլինգի ականատես եղե՞լ եք 1. Այո 2. Ոչ, չեմ եղել
7. Եթե դուք կամ ձեր ընկերը ենթարկվեիք բուլինգի, կամ ներկա գտնվեիք այնտեղ, ո՞ւմ առաջինը կասեիք դրա մասին.. 1. Ուսուցչին 2. Ծնողներին 3. Ընկերոջը 4. Կպահեի իմ մեջ
8. Դուք երբևիցե մասնակցե՞լ եք բուլինգի երևույթին 1. Երբեք չեմ մասնակցել 2. Պատահել է
9. Ի՞նչ եք կարծում բուլինգը խնդի՞ր է, պե՞տք է այն լուծել 1. Այո 2. Ոչ

10.Դպրոցում կա՞ հեղինակություն,ու՞մ կլսեիք*

Հարցմանը մասնակցել է 45 սովորող, հարցման մասնակիցներից 95,6 %-ը տեղյակ է ինչ է բուլինգը, սա շատ բարձր և ոգևորող ցուցանիշ է: Սովորողների մեծամասնությունը չգիտի որոնք են բուլինգի տեսակները, բուլինգի տեսակներին ծանոթ սովորողները հիմնականում նշել են բուլինգի տեսակներից ֆիզիկական և հոգեբանական բռնությունները:

Ինչո՞ւ են հասակակիցները ձեզ բուլինգի ենթարկում. Հարցին սովորողների մեծամասնությունը 77,8 % կարծում է որ ինքը չի ենթարկվել բուլինգի, 17,8 % չի հասկանում իրեն բուլինգի ենթարկելու պատճառը, մյուս պատճառներն էր արտաքին տեսքը և բնավորությունը *(տես.՝ Դիագրամ 1 -ում)*:



Դիագրամ 1.

Դիագրամ 2.

Ինչպե՞ս եք դուք վարվում բուլինգի իրավիճակներում հարցին սովորողների 66,7%-ը պատասխանել է,որ բացատրում է,որ այդպես վարվել չի կարելի,31,1%-ը պատասխանել են,որ այնպես են պահում կարծես ոչինչ չի եղել,2,2%-ն էլ ոչ ոքի հետ չի շփվում: (Տես՝Դիագրամ 2.)

Ենթարկվե՞լ եք երբևիցե բուլինգի հարցին սովորողների 86,7 %-ը պատասխանել է որ ոչ չի ենթարկվել բուլինգի,13,3%-ն էլ պատասանել է, որ այո հաճախ է ենթարկվել բուլինգի,որը մտահոգիչ է:

Եթե դուք կամ ձեր ընկերը ենթարկվեիք բուլինգի կամ ներկա գտնվեիք այնտեղ,ու՞մ առաջինը կասեիք դրա մասին,հարցին պատասխանել է 45 սովորող,նրանցից 38,6%-ը պատասխանել է ,որ կդիմի ուսուցչին,22,8%-ը կվստահի ծնողին,19,3%-ը վսահում է ընկերոջը,19.3%-ն էլ ոչ ոքի չի վստահում:Թվային տվյալներց պարզ է դառնում ,որ սովորողների համար մեծ դեր ունեն ուսուցիչներն ու ծնողները:

Հարցումները ցույց են տալի,որ հարցվողների 10,5 %-ը ենթարկվել է բուլինգի,35,1%-ը ականատես է եղել բուլինգի,28,1%-ը մասնակցել է բուլինգ երևույթին:

93%-ը բուլինգը համարում է խնդիր:Սովորողների մեծ մասը,այն հարցին,թե

<<Կա՞ հեղինակություն դպրոցում>> գտնում են ,որ հեղինակություն են ուսուցիչները,տնօրենը:

Երբ հարցազրույց անցկացրեցի 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտների հետ <<Ի՞նչ կառաջարկեք բուլլինգը կանխելու համար>>, սովորողները առաջ քաշեցին հետևյալ առաջարկությունները.

1. Տարրական դասարաններում սերմանել բարձր գիտակցական մակարդակ:
2. Մեծացնել ծնող-երեխա կապը:
3. Ձևավորել բարձր ինքնագնահատական՝սկսած ընտանիքից:
4. Աշխատանք տանել ծնողների հետ;
5. Պարբերաբար անցկացնել զրույցներ հոգեբանի հետ:
6. Ստեղծել ծնող-ուսուցիչ-հոգեբան կապ:
7. Հաճախ կազմակերպել իրազեկումներ բուլլինգի վերաբերյալ:
8. Դասղեկի ժամերին հաճախակի կազմակերպել զրույցներ բուլլինգի վերաբերյալ;Քննարկել երևույթը,խոսել դրա վատ ազդեցությունների մասին;
9. Աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները, միասին կարդալ այն օրենքները,որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները;
10. Բուլլերներին ենթարկել պատասխանատվության;
11. Խրախուսել այն անձանց, ովքեր պաշտպանում են բուլլինգի ենթարկված սովորողներին:
12. Կազմակերպել ֆիլմդիտումներ << Բուլինգ>> թեմայով:
13. Ավագ սերնդի հանդիպում նոր սերնդի հետ:
14. Ստեղծել հանձնաժողով, որտեղ ընդգրկված կլինեն ուսուցիչներ, ծնողներ, հոգեբան և ԱԽ-ի նախագահը:

Այս առաջարկություններից ինձ հետաքրքրեց այն, որ սովորողները կարևորում էին բարձր ինքգնահատականը: Եվ ես որոշեցի օգտվել Ռ.Վ. Օվչարովայի <<Դեռահասների ինքնագնահատականի որոշման մեթոդիկա>> աշխատանքից կատարել դեռահասների ինքնագնահատականի մակարդակի ախտորոշում: Նպատակս էր պարզել, կա արդյոք կապ բուլինգի և ցածր ինքնագնահատականի միջև: Հարցում կատարեցի 10-12-րդ դասարանների հետ: Հարցաթերթիկները լրացրեցին 45 աշակերտ:

Հարցաթերթ –Դեռահասների ինքնագնահատականի որոշման

Դեռահասների ինքնագնահատականի որոշման	Այո	ոչ	Դժվարանում եմ պատ.
1.Ինձ դուր է գալիս ֆանտաստիկ նախագծեր			
2.Կարող եմ պատկերացնել այնպիսի բաներ,որոնք չկան իրականում			

3.Կանեմ այն աշխատանը,որ ինձ համար<< նոր>> է			
4.Դժվար իրավիճակում արագ լուծումներ եմ գտնում			
5.Հիմնականում փորձում եմ ամեն բանի վերաբերյալ սեփական տեսակետ ունենալ			
6.Ինձ դուր է գալիս պատճառներ գտնել սեփական անհաջողությունների համար			
7.Փորձում եմ սեփական համոզմունքների վրա հիմնվելով՝գնահատականներ տալ արարքներին և իրադարձություններին			
8.Կարող եմ հիմնավորել ,թե ինչու՞ է ինձ որևէ բան դուր գալիս			
9.Ինձ համար դժվար չէ ցանկացած խնդրում առանձնացնել առաջնայինն ու երկրորդայինը			
10.Կարող եմ համոզիչ խոսել և ապացուցել,որ ճիշտ եմ			
11.Կարողանում եմ բարդ խնդիրը բաժանել մի քանի պարզ մասերի			
12.Ինձ մոտ հաճախակի են հետաքրքիր գաղափարներ ծնվում			
13.Ինձ մար ավելի հետաքրքիր է ստեղծագործական, քան այլ տեսակի ածխատանք իրականացնելը			
14.Միշտ ձգտում եմ այնպիսի աշխատանք կատարել,որում կարող եմ ստեղծագործական մոտեցում ցուցաբերել			
15.Ինձ դուր է գալիս ընկերներիս շրջանում կազմակերպչական աշխատանքներ կատարելը			
16.Ինձհամար կարևոր է,թե ինչպես են իմ աշխատանքը գնահատում			

Դրական պատասխանի համար տրվում էր 2 միավոր,<<դժվարանում եմ պատասխանել>> պատասխանի համար՝1 միավոր,<<Ոչ>> պատասխանի համար միավոր չէր տրվում:

Հարցվող սովորողներից 26-ից 18-ը ունեն բարձր ինքնագնահատական:3-ը ՝ միջին ինքնագնահատական:

Ինչպես նաև պատասխանեցին մեկ ուրիշ հարցաթերթիկի հարցերին,որը վերաբերվում էր <<Բուլլինգին>>

Այդ հարցերն էին՝

1.Պատահե՞լ է ,որ ձեզ ծաղրեն արտաքինի համար
1. Այո
2. Ոչ
2.Ձեզ ծանոթ է<< Բուլլինգը>>
1. Այո
2. Ոչ
3.Երբևէ ականատես եղել եք,որ դպրոցում որևէ աշակերտ հարվածի,թքի,ծաղրի մեկ ուրիշ աշակերտի
1. Այո 2.Ոչ
4.Եղել է,որ ձեզ ստիպեն անել որևէ բան,ձեր կամքին հակառակ
2. Այո,ապա ինչն է պատճառը
3. Ոչ
4. Երբեմն
5.Պատահել է,որ խուսափեք դաս պատասխանել դասընկերների ծաղրին չարժանանալու պատճառով
1. Այո
2. Ոչ
3. Երբեմն

Այս հարցերի պատասխաններից պարզ դարձավ,որ 45 սովորողներից 18-ը ունեն

ինքնագնահատականի բարձր մակարդակ,որից 4-ը ենթարկվել են բուլլինգի,

8-ը ունի ինքնագնահատականի միջին մակարդակ,որից 5-ն են ենթարկվել են բուլլինգի:

Եթե արտահայտենք տոկոսներով,ապա կստացվի հետևյալ պատկերը

Ինքնագնահատականի միջին մակարդակ՝ 69%:

Ինքնագնահատականի ցածր մակարդակ՝ 31%: Ցածր մակարդակ ունեցողների 63 %-ը ենթարկվել է բուլլինգի:

Այսպիսով՝ եթե նայում ենք տվյալներին, ապա հասկանում ենք, որ գոյություն ունի կապ ինքնագնահատականի և բուլինգի միջև: Այսինքն պետք սովորողների հետ աշխատանք տանել նաև ինքնագնահատականը բարձրացնելու ուղղությամբ: Առանձին դեպքերից ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ժամանակին կիրառված ռազմավարությունը նպաստել է, որ երբեմնի բուլինգ իրականացնողները փոխեն իրենց անցանկալի ագրեսիվ վարքագիծը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում նկարագրվեց և ուսումնասիրվեց շատ արդիական երևույթ,որը բուլինգն է:

Այսպիսով՝ տեսական գրականության և հետազոտության տվյալների վերլուծությունը ցույց տվեցին, որ կարող է գոյություն ունենալ կապ ցածր ինքնագնահատականի և բուլինգի միջև, քանի որ, ըստ կատարված հետազոտության արդյունքների, ցածր ինքնագնահատական ունեցող սովորողները ավելի շատ են ենթարկվում բուլինգի:

Բուլինգը հնարավոր է կանխել, եթե դպրոցներում լինեն հոգեբաններ, ովքեր համագործակցելով մանկավարժների, աշակերտների և ծնողների հետ, կկիրառեն համապատասխան մեխանիզմներ և կհասնեն արդյունքի: Կնպաստեն հուզական գրագիտության բարձրացմանը: Եթե չիրականացվեն համապատասխան միջոցառումներ բուլինգը ձնագնդիի պես մեծանալով կդառնա ձնահոսք և կհասցնի ավելի մեծ վնասներ:

Խնդիրը բարձրաձայնելուց հետո պարզ դարձավ,որ սովորողների մեծ մասը անհանգստանում է այդ երևույթի համար և գտնում է, բուլինգը նպաստում է ուսման առաջադիմության վրա՝ հասցնելով նրանց կրթական վնաս և նրանք հանդես եկան իրենց առաջարկություններով.

- տարրական դասարաններում սերմանել բարձր գիտակցական մակարդակ,
- մեծացնել ծնող-երեխա կապը, ձևավորել բարձր ինքնագնահատական՝սկսած ընտանիքից,
- աշխատանք տանել ծնողների հետ,պարբերաբար անցկացնել զրույցներ հոգեբանի հետ,ստեղծել ծնող-ուսուցիչ-հոգեբան կապ,
- հաճախ կազմակերպել սեմինարներ բուլինգի վերաբերյալ,
- դասղեկի ժամերին հաճախակի կազմակերպել զրույցներ բուլինգի վերաբերյալ,քննարկել երևույթը,խոսել դրա վատ ազդեցությունների մասին,
- աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները, միասին կարդալ այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները,
- բուլերներին ենթարկել պատասխանատվության,խրախուսել այն անձանց,ովքեր պաշտպանում են բուլինգի ենթարկված սովորողներին,կազմակերպել ֆիլմդիտումներ<< Բուլլինգ>> թեմայով,նախկին սերնդի հանդիպում նոր սերնդի հետ,ստեղծել հանձնաժողով,որտեղ ընդգրկված կլինեն ուսուցիչներ,ծնողներ,հոգեբան և ԱԽ.ի նախագահը:

Հարցումներից պարզ դարձավ, որ ցածր ինքնագնահատականը կարող է պատճառ հանդիսանալ Բուլինգի ենթարկվելուն:Ուստի պետք է աշխատանքներ տանել սովորողի ինքնագնահատականը բարձրացնելու ուղղությամբ:Դա պետք է սկսել ընտանիքից,տարրական դասարանից:Պետք է աշխատանք տանել ծնողի հետ՝դրական ծնողավարության հմտությունների ձևավորման ուղղությամբ:

Քանի որ նոյեմբեր ամսվա երրորդ շաբաթը համընկնում է բուլինգի դեմ պայքարի շաբաթի հետ, առաջարկում եմ դպրոցում կազմակերպել միջոցառում <<Բուլինգ>>թեմայով,որի հիմնական նպատակը կլինի բարձրացնել աշակերտների իրազեկվածության մակարդակը բուլինգի վերաբերյալ,խոսել նրանց հետ կարծրատիպերց և խտրականությունից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

https://www.swv.am/index.php/hy/our-pillars-am/rapid-response-unit-am/1213-2018-12-05-12-55-30

https://boon.am/bullying-in-schools/

https://elearning.kasa.am/pluginfile.php/9998/mod_resource/content/0/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%A8%20%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4.pdf

https://ombuds.am/am/site/ViewNews/2279

https://scholarworks.waldenu.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=2605&context=dissertations

https://www.unicef.org/armenia/%D5%B4%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%A1%D5%B4%D5%A2%D5%B8%D5%B2%D5%BB-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B4%D5%AB%D5%AC%D5%AB%D5%B8%D5%B6%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80-%D5%A5%D5%B6%D5%A9%D5%A1%D6%80%D5%AF%D5%BE%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A5%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%AB%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%BC%D5%B6%D5%AB

https://infourok.ru/user/scherbakova-yuliya-viktorovna/blog/chto-takoe-buling-210915.html

Аверьянов А. И. Буллинг как вызов современной школе // Педагогика, психология и социология. – 2013. – № 18. – С.45-50

. Кон И. С. Что такое буллинг и как с ним бороться? // «Семья и школа». – 2006. - № 11. -С.15-18

file:///C:/Users/User/Desktop/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%A8%20%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4.pdf

https://youtu.be/dHBF1p-2UPM?si=97ggU9xwxq3Hit7c

https://liberalinstitute.am/wp-content/uploads/2023/06/%D5%80%D5%B8%D6%82%D5%A6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A3%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%88%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF.p

file:///C:/Users/User/Desktop/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%A8%20%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4.pdf

Self_HELP_Conflict.pdf

FAMILY Glasl final.pdf

Basic Guide Mediation arm - revised.pdf

Առաջարկվող ֆիլմեր

Нас приняли!(2006)

После Люси(2012)

Алена(1)(2015)

Школа выживания(2008)

Звездочки наземле2007()

Еще одна история о Золушке(2008)

Простушка(2015)

Бултарка(2012)

Цветочки после ягодок(2009)

Хароший доктор(2017)

https://www.kinopoisk.ru/film/397493/?utm_referrer=www.google.com

https://youtu.be/fyNBfc6XDZw?si=dSgb9Ol_aGrvrbr6